

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1887 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Բ.

5 ՅՈՒՆԻՍ 1887



Կ. ԳՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸՆԱՆ

1887

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Յարութիւն	էֆէնտի Մէրեմ-Գուլի	Ա. Ատեհապետ
Քրիստոստուր	» Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	» Թորոսեան	Գ. »
Մկրտիչ	» Մէլիքեան	Ա. Ատեհապետ
Ստեփան	» Տամատեան	Բ. »
Աւետիս	» Թնկրեան	Գ. »

Ձեռնապատկերեան Դիւան

Սիմէօն Եպսկ. Սէֆէրեան
Գարեգին Վրդ. Թաթարեան
Յովհաննէս էֆ. Թորոսեան

Դաստիարակութեան Դիւան

Գարբիէլ էֆ. Նորատունկեան
Ռէթէոս » Պէրպէրեան
Յովսէփ » Շիշմանեան

Կարուածոց Դիւան

Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան
Մատթէոս » Ալէքսանեան
Յակոբ » Պօշնակեան

Համարակալութեան Դիւան

Յարութիւն էֆ. Նորատունկեան
Համբարձում » Մազպուլեան
Սեպուհ » Տէմիրճիպաշեան

Յարաբերութեան Դիւան

Տիգրան էֆ. Եռասուփեան
Միհրան » Սէթեան
Կարապետ » Սըվաճեան

Իրաւասութեան Դիւան

Յովհաննէս Աւագ Քհ. Մկրտեան
Միհրան էֆ. Չօպանեան
Յակոբ » Արշակ

Նախաձեռնութեան Դիւան

Յովհաննէս էֆ. Նուրեան
Նշան » Պոյաճեան
Միքայէլ » Մամիկոնեան

Խմբագրութեան Դիւան

Յարութիւն էֆ. Թիրեաքեան
Մկրտիչ » Մէլիքեան
Համբարձում » Ալաճաճեան

ԲԱՅՈՒՄՆ 1887 ԱՄԻ

ՆԻՍՏ Բ.

5 ՅՈՒՆԻՍ 1887

ՆԱԽԱԳԱՀ. — Պատրիարքական ֆոխանորդ Տ. Գէորգ Մ. Վրդ. Իւթիւճեան (Աւժամեայ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մէրեմ-Գուլի Էֆէնտի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Կազմութիւն Նախաքննիչ Դիւանաց.
- Բ. — Վերաքննեալ Կանոնադիր Սրբոց Յակոբեանց Միաբանութեան.
(Տեղեկագիր Ազգային Վարչութեան-Շար. վիճարանութեան).
- Գ. — Տեղեկագիր Համարատուութեան Ս. Երուսաղիմայ Խորհ. Յանձնա-
ժողովոյ.
- Դ. — Վերջնական Տեղեկագիր և հրատարումն Ս. Երուսաղիմայ Խորհ.
Յանձնաժողովոյ.
- Ե. — Տեղեկագիր Ազգ. Վարչութեան ի մասին հաշուետուութեան Սո-
վերոց դադարեալ Յանձնաժողովոյ.

Ամեն. Պատրիարք Ս. Հայրն անձնական
տկարութեամբ ժողովէն բացակայ մնալն զե-
կուցած լինելով Դիւանին, Ատեհապետ է-
ֆէնտի աւժամեայ Նախագահութեան կը
հրաւիրէ Պատրիարքական ֆոխանորդ Ս.
Հայրն, որ սովորական աղօթիւք ատենը
Հայրն, որ սովորական աղօթիւք ատենը
կը բանայ ժամը 4 ին, ի ներկայութեան 22
Երեսփոխանաց, որոց թիւն ի վերջոյ 27 ի կը
յանգի:

Նագրութեանց վաւերացումը, որոց վեցն
1883 ամի բացումէն ցարդ անտիպ մնացած,
ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. և ԻԶ. նիստերու-
նքն են, և երկուքը նախընթաց 1886 ամի
բացման Ը. և Թ. նիստերունն, զորս Ձեր
ընդունելութեան պիտի ենթարկեմ կարգաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՔ

1

Խնդիր Ատեհապետութեանց վաւերացման
(Նիստ ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. և ԻԶ. 1883 ամի
բացման և Նիստ Ը. Թ. 1886 ամի բացման.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատեհական գործո-
ղութեանց մէջ ունիմք ութ նիստերու ատե-

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կառավարիւմ ա-
տենագրութեանց վաւերացման գործողու-
թիւնն յաջորդ նստին թողուլ, վասն զի ա-
նոնց վրայ իմ դիտողութիւններս նշանակե-
լու ժամանակ չեմ ունեցած տակաւին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ ատենագրու-
թիւնը բաւական օրերէ ի վեր բաշխուած են
Երեսփոխանաց և Ձեր առարկութիւնը, Փա-
փազեան էֆէնտի, չբաւեր յետաձգելու նո-
ցա վաւերացումն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես նոր ստացայ զանոնք, մանաւանդ թէ խել մը կարեւոր դիտողութիւններ ունիմ 1883ի ատենագրութեանց վրայ: Ուստի, կը խնդրեմ որ յառաջիկայ նստին թողուի այս խնդիր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես կառաջարկեմ այսօր վաւերել այդ ութ նիստերու ատենագրութիւններն:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Փափազեան էֆէնտի կը ձայնակցիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ որ առաջարկն երկրորդը ունեցաւ, կրնամ քուէի դնել զայն:

Քուէարկութիւն կը կատարուի եւ ժողովն ընդդէմ 4 քուէից, 8 քուէով ԿՈՐՈՇԷ յաջորդ նստին թողուլ յիշեալ ութ ատենագրութեանց վաւերացումը:

2

Բացակայութիւն

Ատենապետ էֆէնտի ծանուցանելով թէ Երեսփոխաններէն՝

- S. Գրիգոր Բէյ. Աճէմեան
- Յովհաննէս էֆ. Նուրեան
- Սերովբէ » Ազնաւոր
- Յովհաննէս » Թորոսեան

անձնական տկարութեամբ, եւ կարապետ էֆ. Երէցեան ճամբորդութեամբ ժողովոյ այս աւուր նիստէն բացակայ մնալին գրով հաղորդած են, օրինաւոր բացակայ նշանակել կուտայ զանոնք: Եւ կը յարէ թէ Ազնաւոր Սերովբէ էֆ. ցաւ յայտնած է իւր գրոյն մէջ՝ բացակայութեանը պատճառաւ Երուսաղիմայ կանոնադրին վրայ իւր դիտողութիւններն ընելէ արգիլուելուն համար, զորս յայտնած


լինելով յանցելուն, իւր պաշտօնակցաց իմաստութեանը կը վստահի:

Մ Ի Զ Ա Դ Է Պ

Ատենական գործողութիւնք վերջացած լինելով, այն ինչ Ատենապետ էֆէնտի կը պատրաստուէր Օրակարգին անցնիլ, եւ ահա Տամատեան Ստեփան էֆէնտի, խօսք առնելով կը յայտնէ թէ՛ ինչպէս յառաջագոյն յայտարարած է, իւր զբաղումներն չեն ներեր իրեն ներկայ շրջանի համար եւս ընդունիլ Դեր-Ատենագրութիւն պաշտօնն, զոր վարած էր երկու տարիներէ հետէ:

Ի պատասխանի Տամատեան Ստեփան էֆէնտի, Ատենապետ էֆէնտի դիտել կուտայ որ՝ անձնական զբաղմանց համար պաշտօնէ հրաժարելու պատճառն՝ Մայր-Դիւանի իւրաքանչիւր անդամն ալ կրնայ ունենալ, եւ ինքն թերեւս ամենէն աւելին, բայց քանի որ ժողովը տրամադիր չէ հրաժարականի յայտարարութիւններ լսելու, Տամատեան էֆէնտի պէտք է համակերպի ժողովոյն կամաց: Մանաւանդ թէ, կը յարէ, նորընտիր Ա. Ատենագրութիւն իւր ձեռնհասութեամբ՝ մեծ աշխատութիւն չի թողուր միւս պաշտօնակցացը վրայ:

Երեսփոխանը համամտութիւն կը յայտնեն Ատենապետ էֆէնտի, որ սոյն միջադէպն փակեալ յայտարարելով ԿՍՆՅՆԻ Օրակարգին:



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

Կազմութիւն Նախահանգ-Դիւանաց

Ատենապետ էֆէնտի բաշխել կուտայ Երեսփոխանաց՝ 1887-88 տարեշրջանի Նախահանգ Դիւանաց ընտրութեան համար ի ձեռն Մայր-Դիւանի պատրաստուած հետեւեալ սրբագրելի ցանկն:

Ձեռնաստրեան Դիւան

- Սիմէօն Եպսկ. Սէֆէրեան
- Գարեգին Վրդ. Թաթարեան
- Յովհաննէս էֆ. Թորոսեան

Դասախարակութեան Դիւան

- Գարրիէլ էֆ. Նորատունկեան
- Ռէթէոս » Պէրպէրեան
- Յովսէփ » Շիշմանեան

Կարուածոց Դիւան

- Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան
- Մատթէոս » Ալէքսանեան
- Յակոբ » Պօշնակեան

Համարակալութեան Դիւան

- Յարութիւն էֆ. Նորատունկեան
- Համբարձում » Մագպուլեան
- Սեպուհ » Տէմիրճիպաշեան

Յարաբերութեան Դիւան

- Տիգրան էֆ. Եռսուփեան
- Միհրան » Սէթեան
- Կարապետ » Սըվաճեան

Իրաւաստրեան Դիւան

- Յովհաննէս Աւագ Բէյ. Մկրեան
- Միհրան էֆ. Զօպանեան
- Յակոբ » Արշակ

Նախահանգութեան Դիւան

- Յովհաննէս էֆ. Նուրեան
- Նշան » Պօյաճեան
- Միքայէլ » Մամիկոնեան

Խմբագրութեան Դիւան

- Յարութիւն էֆ. Թիրեաքեան
- Մկրտիչ » Մէլիքեան
- Համբարձում » Ալաճաճեան

Եւ հրաւիրուելով զԵրեսփոխանս ձեռնարկել քուէարկութեան, քուէհամարի քընիք կը կարգէ վիճակաւ:

- S. Եղիշէ Վրդ. Այվազեան
- S. Յովհաննէս Աւագ-Բէյ. Մկրեան
- Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան
- Գէորգ » Վարդանեան

Քուէարկութեան կը մասնակցին 27 Երեսփոխանք եւ քուէհամարը կատարուելով արդիւնքը կը մատուցուի Դիւանին:

Ատենապետ էֆէնտի քննելով քուէհամարի արդեանց բովանդակութիւնը, կը տեսնէ որ 27-1 սպիտակ—26 քուէթուղթք ելած են սուփէն, եւ սրբագրելի ցանկին պարունակուած անուանց իւրաքանչիւրոյն առջեւ 19 էն սկսեալ առ առաւելն 22 քուէներ կան նշանակուած, որք 24 ձայնից միաբանութիւն չեն արտադրեր: Բաց յայտնէք քուէհամարի պահուն դիտուած էր որ՝ առանց եւ ոչ մի սրբագրութեան՝ նոյնութեամբ քուէարկուած անուններ կային, ո-

րոց առջև 26 ական քուէ պէտք էին նշանակուիլ, ուստի եւ ներկայացեալ արդիւնքը ստոյգ չէր կրնար լինել: Հետեւաբար Ատենապետ էֆէնտի կը յայտարարէ թէ քուէհամարի գործողութիւնը կրկնել հարկ կը լինի:

Սոյն դիտողութեան վրայ, քուէհամարի ֆինիչը եւս կը հաստատեն թէ քուէհամարի արձանագրութեան մէջ շփոթութիւն մը սպըրդած լինելու է Դիւանագրաց կողմանէ: Եւ Փախազեան Ս. էֆէնտի ալ կը դիտէ որ նախաքննիչ Դիւանի անդամոց ընտրութեան համար ներքին կանոնագրութիւնը մէկ դարձ քուէարկութիւն տրամադրելով, ներկայացեալ արդիւնքն ալ օրինաւոր կը համարուի: Բայց Ատենապետ էֆէնտի կը պատասխանէ թէ Դիւանը չկրնար այս ընտրութիւնն հըռչակել իբր օրինաւոր, մինչեւ որ ժողովն չի հաստատէ զայն 24 ձայնից միտքան քուէարկութեամբ:

Եւ ապա՝ Երեսփոխանաց առ այս յայտնած համամտութեան վրայ քուէի կը դնէ Մայր Դիւանի կողմէ պատրաստուած վերոյնշանակեալ ցանկին ամբողջութիւնն, զոր ժողովը ԿԸՆԴՈՒՆԻ միտքայն:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի 1887-88 ամի նախաքննիչ Դիւանաց անդամ ԿԸ ԶԱՅԱՅ անոր մէջ նշանակուած 24 անձինքն եւ շնորհաւորելով նոցա պաշտօնն, կը յայտարարէ թէ՛ իւրաքանչիւր Դիւան պիտի հըրաւիրուի ի մօտոյ ընտրել իւր Ատենապետն եւ նոյնին անունն զեկուցանել առ Մայր Դիւանն:

* *

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Օրակարգի յաջորդ խնդրոյն չանցած, օրինական հարցման մը համար խօսք կրնա՞ք տալ ինձ, Ատենապետ էֆէնտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսէ՛ք, տեսնեմ ի՞նչ է:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ասկից չուրջ եօթնամիս առաջ հարցում մ'ուղղած էի առ Ազգ. Վարչութիւնն, վերաբերմամբ Ազգ. Վարչութեան մէջ տեղի ունեցած 800 ոսկու գողութեան դէպքի մը: Ոմանք կըսէին թէ այդ գողմարն Վանքին սեպհականութիւնն էր, այլք՝ թէ Տ. Սաչատուր Կաթողիկոսի անձին կը վերաբերէր: Ես հարցուցած էի թէ ստոյգ էր գողութիւնն եւ ո՞ւմ կը պատկանէր գողօնը: Նաեւ լսած լինելով թէ՛ սոյն խնդրոյն առթիւ Խիզանցի ծերունի Յակոբ Եպիսկոպոսն ալ բանտարկուած է, հարցուցած էի թէ ստոյգ էր սոյն Եպիսկոպոսին բանտարկութեան լուրը:

Ի պատասխանի իմ հարցման, Վարչութեան Դիւանին կողմանէ յայնժամ բերանացի արուած բացատրութիւններէն սա չափ միայն կրցայ հասկնալ թէ՛ գողութիւնը պատահած եւ միանգամայն պատահած չէ՛ նոյնպէս բանտարկութիւնը տեղի ունեցած է եւ միանգամայն տեղի ունեցած չէ: Նոյն օրն Վարչութիւնն յայտարարեց նաեւ թէ՛ Գեր. Օրմանեան Ս. Եպիսկոպոսի հրահանգ տրուած է, որ էջմիածնէ վերադարձին Ազգ. Վարչութեան հանդիպելով, քննէ այդ խնդիրն եւ կեդրոնին տեղեկագրէ:

Բայց կը տեսնեմ թէ, ինչպէս կըսէի, այդ եղելութեան վրայ եօթն ամիսներ անցած են եւ տակաւին տեղեկագիր մը չէ եկած հոս: Ուստի կը պարտաւորիմ նոյն հարցումն հարցապնդման վերածել եւ ըստ այնմ խնդրել Պատ. Դիւանէդ որ շնորհ ընէ խնդրոյն մանրամասն տեղեկագրիւր Վարչութեանն պահանջել:

Նոյնպէս վեց ամիս առաջ ուրիշ հարցում մ'ալ ըրած էի վերաբերմամբ Կաթողիկոսական Յանձնաժողովը գործառնութեանց: Այս հարցմանս պատասխանն ալ ց'արդ չէ եկած: Մերթ ընդ մերթ կը լսեմք թէ այս զարմանալի մարմին նիստ կընէ, բայց աւելի տեղեկութիւն մը չունիմք իւր գործոց եւ աշխատութեանց վրայ: Եւ ես այնպէս կենթադրեմ թէ այդ Յանձնաժողովոյն գումարուելու մասին եղած ազգա-

րարութիւնք պարբերական օրօրներ են պարգասէս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ասեմարանին խօսքն րնդնատելով) Օրինական սահմանի մէջ յայտնուած կարծիքներն կրնամ մտիկ ընել, բայց ո՛չ այդ տեսակ անստուշած ակնարկութիւններ:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Երբ նոյեմբեր Աի նստէն յետոյ Յանձնաժողովն կազմակերպեցաւ, կը յուսացուէր որ, ըստ որում էջմիածնաց Գահն այլ եւս թափուր չէր համարուէր, կարելի պիտի լինէր ստուգայ ընտրութեան եղանակի մասին գործ մը տեսնել եւ յուզմանց առաջն առնու համար միջոցներ խորհիլ եւ գտնել: Բայց դժբաղդարար կը տեսնեմք թէ դարձեալ խնդիրն մոխրոց տակ ծածկել կուզուի: Հարկ է ուրեմն որ այդ Յանձնաժողովն կա՛մ գործէ եւ բերէ հոս իւր գործոց համարն եւ կա՛մ բողոքովին հրաժարի, որպէս զի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջմամբ) Կրկին անգամ կ'աղբարարեմ Գուրգէն էֆէնտի թէ չեմ կրնար թոյլատրել իրեն այս ոճով խօսելու: Եթէ հարցում մ'ըրած է ասկից յառաջ եւ պատասխանն ց'արդ չէ ստացած, իրաւունք ունի վերստին յիշեցնել զայն: Բայց այս առթիւ ելնել ժողովոյս քուէովն ընտրուած պաշտօնական մարմնոց մը դէմ այդպիսի ենթադրութիւններ եւ դիտողութիւններ ընել ո՛չ պատշաճ է եւ ո՛չ ալ ներելի:

Ուստի կը հրաւիրեմ զԱտենաբանն խընդիրն եզրակացնել:

Գուրգէն էֆ. իւր խօսքին շարունակութեան մէջ վերստին ակնարկութիւններ ընելով, զանազան նստարաններէ դժգոհութեանց ցոյցեր եւ ընդմիջումներ կը լինին եւ բարեկարգութիւնը պահ մի կը խանգարեն: Ատենապետ էֆէնտի բարեկարգութիւնը վերա-

հաստատելով, վերջին անգամու համար կը հրաւիրէ զԳուրգէն էֆէնտի կարճ բառով եզրակացնել իւր խօսքն, եւ կ'ազգարարէ որ՝ ի հակառակ պարտաւոր պիտի արգելու խօսելէ:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Եզրակացութիւնն է՛ վերստին պահանջել Կաթ. Յանձնաժողովն որ խնդրոյն վրայ ցարգ իւր ձեռք առած միջոցներն եւ տեղի ունեցած բանակցութեանց արդիւնքն, եթէ իրօք տեղի ունեցած են, տեղեկագրէ ժողովոյս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լա՛ւ:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Երրորդ հարցում մ'ալ ունիմ որ կը վերաբերի Պէկեան Թագէտ էֆէնտի երեսփոխանութեան խնդրոյն: Ինչպէս կը յիշէ ժողովը, Պէկեան էֆէնտի Սամաթիոյ Ենիմահալլէի թաղէն երեսփոխանական ընտրութեան վաւերացման դէմ երկու տեսակ արգելքներ կային: Մին էր՝ հսկատակութեան խնդիրը, որ լուծուեցաւ եւ միւսն՝ անցեալ դէպքերու վերաբերեալ խընդիր մը, որոյ վերջնական կարգադրութիւնն, ինչպէս գիտէք, յանձնուեցաւ Պատրիարք Ս. Հօր, որ հարկ եղած քննութիւններն կատարելէ զինի, ի պաշտօնէ տեղեկագրեց ժողովոյս թէ՛ այլ եւս արգելք մը չի տեսներ Պէկեան Թագէտ էֆէնտի երեսփոխանական ընտրութեան վաւերացման դէմ՝ եւ ժողովս ալ առ այս համակերպեցաւ:

Արդ քանի որ սոյն երկու պատճառներն ալ բարձուած են, պէտք է որ յիշեալին երեսփոխանական ընտրութեան տեղեկագրին մինչեւ յառաջիկայ նիստ ներկայանայ ժողովոյս եւ վաւերանայ:

ՁԱՅՆԵՐ. — Ուրի՞շ:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ուրի՞շ հարցումներ

ալ ունիմ, բայց այս անգամի համար այսչափին բաւ կը համարիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանս շնորհակալ կը լինի այն երեսփոխաններէն, որք իրենց խօսելու իրաւանց սահմանին մէջ կուգան օգնել մեր յիշողութեան, բայց այն բացարձակ պայմանաւ որ՝ պատշաճից օրէնքը յարգեն եւ իրենց իրաւունքը չարաչար չգործածեն: Այս առիթը պատեհ կը համարիմ յայտնելու համար նաեւ թէ մտադրած եմ հարկ եղած միջոցները ձեռք առնուլ յստակելու համար բոլոր այն խնդիրներն որք մեր խնդրոց կարգին մէջ առկա մնացած են ցարդ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ձեմ յիշեր թէ Ա. լիթամարայ Կաթողիկոսի խնդրոյն առթիւ երբ հարցում եկած է հոս, բայց քանի որ եկած է կըսուի, ուստի ես ալ կը ձայնակցիմ անոր: Պէտք է որ Ա. լիթամարայ վանուց մէջ տեղի ունեցած այդ դէպքին մանրամասնութեանց ծանօթանայ այս ժողովը:

Գալով Գուրգէն էֆէնտիի երկրորդ հարցման, այն է Կաթողիկոսական Յանձնաժողովոյ գործառնութեանց, այդ մասին հարցում իսկ ընել աւելորդ կը դատիմ, վասն զի ինձ համար գոյութիւն չունին ո՛չ Կաթողիկոսական խնդիրն եւ ո՛չ Յանձնաժողովոյ գործառնութիւններն: Ես այդ մարմնոյն ընտրութեան մէջ ձեռնպահ մնացի: Որոնք որ խընդիրն այս վիճակին բերին հասուցին, թո՛ղ անոնք խորհին:

Գալով Պէկեան էֆէնտիի երեսփոխանական ընտրութեան խնդրոյն, պէտք է որ Դիւանն, ինչպէս կը յայտարարէր, այս եւ այս օրինակ բոլոր առկա խնդրոց կարգադրման համար հարկ եղածը միանգամ ընդ միշտ ի գործ դնէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէկեան էֆէնտիի երեսփոխանական խնդրոյն մասին ես եւս կը ձայնակցիմ Գուրգէն էֆէնտիի: Բայց Կաթողիկոսական խնդիրն, ինչպէս իրաւամբ դի-

տել տուաւ Քրիստոստուր էֆէնտի, մեզ համար ո եւ է նշանակութիւն չունի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Ինչ որ պահ մ'առաջ կազդարարէի Գուրգէն էֆէնտիի, իւր խօսքին մէջ խառնած են թաղաբուծեանց եւ ակնարկութեանց մասին, նոյնը կը կրկնեմ եւ Քրիստոստուր ու Փափազեան էֆէնտիներուն:

Այս պահուս Գարագաշ նշան էֆէնտի եւս խօսք կը խնդրէ Դիւանէն ընդդիմաբանելու համար Ղաղարոսեան Ք. էֆէնտիի: Բայց Ատենապետ էֆէնտի դիտել տալով թէ՛ հարկ եղածն ըսուեցաւ Դիւանէն, եւ թէ՛ միջադէպի մը առթիւ ներելի չէ իւրաքանչիւր երեսփոխանի խօսք տալ, կանցնի Օրակարգի յաջորդ խնդրոյն:

Բ.

Վերաբնեւոյ Կանոնագիր Սրբոց Յակովբեանց Միաբանութեան. (Տեղեկագիր Ազգ. Վարչութեան. — Շար. միեմարանութեան):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգի երկրորդ խնդիրն է՝ վերաքննեալ Կանոնագիր Սրբոց Յակովբեանց Միաբանութեան եւ տեղեկագիր Ազգ. Վարչութեան:

Նախորդ նատին մէջ, ինչպէս դիտեք, սոյն Կանոնագրի ամբողջութիւնն քուէարկութեամբ ընդունուած լինելով, այժմ պիտի ձեռնարկեմք յօդուած առ յօդուած քննութեան եւ ընդունելութեան:

Ուստի կը հրաւիրեմ զԱտենադպիր էֆէնտին ընթեռնուլ Կանոնագիրն, Ա. յօդուածէն սկսեալ:

Ատենադպիր էֆէնտին կսկսի ընթեռնուլ:

ՅՈՒ. 1. — Սրբոց Յակովբեանց Միաբանութիւնը կը կազմուի Սրբոց Յակովբե-

եանց Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքէն՝ որ Փլուխ է Միաբանութեան, և հետեւեալ կարգերէն, որք են՝

Եպիսկոպոսք	Թուով	5
Վարդապետք	»	40
Սարկաւագք	»	12
Դպիրք	»	12
Ժառանգաւոր աշակերտք	»	30
Քրձազգեաց եղբարք	»	80
Մայրապետ քորք	»	30

—
209

ՅՈՒ. 2. — Սրբոց Յակովբեանց Միաբանութեան անգամ ընդունուելու փափաքող անձն պէտք է գրաւոր խնդիր մատուցանէ Ս. Պատրիարքին, Իսկ ընդունուելու համար պայման է՝ 1. առողջ ըլլալ մարմնով. 2. 16 էն մինչեւ 18 տարեկան հասակաւ՝ եթէ ժառանգաւորաց Վարժարանի աշակերտութեան կ'ուզէ մտնել ներկայացողը, 18 էն մինչեւ 40 տարեկան՝ եթէ Քրձազգեցից կարգը ընդունուիլ կը փափաքի, և 30 էն մինչեւ 40՝ եթէ Մայրապետ է. 3. բարեբարոյ վկայեալ, և 4. Միաբանութեան մէջ ո՛ր և է գործով մը Ս. Աթոռոյ ծառայութիւն մատուցանելու կարող և պատրաստական ըլլալ:

ՅՈՒ. 3. — Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանգամանք մասնաւոր վճարայագրով ստուգուելէ, և բժշկական քննութեամբ հաստատուելէ ետքը՝ ընտրելին վարքն ու բարքը և յաջողակութիւնը հասկցուելու համար Տնօրէն ժողովոյ կողմէն փորձոյ կենթարկուի:

ՅՈՒ. 4. — Չինի փորձոյ, ընտրելին

վկայագրերը և փորձոյ ժամանակ իւր վրայ հսկող Պաշտօնակալին տեղեկագրերը յատենի Տնօրէն ժողովոյ կարգացուելով, եթէ ընդունելութիւնն որոշուի, Միաբանութեան Մայր-Տուժարին մէջ անունը կարձանագրուի, և անմիջապէս պաշտօնը սահմանուելով կը յանձնուի Տեսչութեան խնամոց ում կը պատկանի:

ՅՈՒ. 5. — Եթէ անգամակցութեան խնդրարկուն արդէն Եկեղեցական դասէ է, առողջական, բարոյական և Եկեղեցական վիճակը կանոնաւոր ըլլալն ըստուգուելէ ետքն՝ «Միաբանութեան կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ «Հաւատարմարար ծառայելու» խոստմագիրն առնուելով ձեռքէն, կը վճռուի ընդունելութիւնն Ս. Պատրիարքի հաւանութեամբ և Տնօրէն ժողովոյ որոշմամբ:

ՅՈՒ. 6. — Միաբանք պարտին իւրաքանչիւրն իր կարողութեան չափով ծառայութիւն մատուցանել Ս. Աթոռոյ: Այն միաբանը, որ պաշտօնի կը կոչուի, և առանց օրինաւոր արգիւթ ունենալու, կը մերժէ դայն և կը զլանայ իր ծառայութիւնը, պարտազանց կ'ըլլայ և պատժապարտ:

ՅՈՒ. 7. — Միաբանք իրաւունք ունին Ս. Աթոռէն ընդունիլ, — Ա. Բճակարան, ՍՅՈՒՆ, իսկ Սարկաւագունք, Դպիրք, Ժառանգաւորք և Քրձազգեացք նաեւ Հագուստ, և իւրաքանչիւրն, ինչպէս նաեւ Վարդապետք և Եպիսկոպոսունք իրենց անձնական մանր ծախքըն հողալու համար Միաբանական անունով տարեկան մը, որ անձնիւր կարգի

և անտիճանի յատուկ բաժանում ունի, և Պաշտօնակաճ անունով տարեկան մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացած ըլլալով կը տրուի պաշտօնակարաց, — Բ. Հիւանդութեան ժամանակ Գարման, և ծերութեան ժամանակ Խրեամբ, — Գ. Ուսումն եւ Գաստիարարութիւն, անոնք՝ որ Յարմարութիւն ունին, և ի մասնաւորի անոնք՝ որ Եկեղեցականութեան կը պատրաստուին, — Դ. Եկեղեցական կարգ եւ Ս. Աստիճան անոնք միայն որ Արժանաւորութիւն եւ փախ՝ ունին, և որոց զանազան աստիճանի բարձրացումն Լուսարարատի և Գլխոցաց Տեսչի: Տեղեկագրոց վրայ Տնօրէն ժողովով կ'որոշուի, բաց ի Եպիսկոպոսական աստիճանի բարձրացումէն, որ Տնօրէն ժողովոյ առաջարկութեան Միաբանական Ընդհ. ժողովով կ'որոշուի:

Այս որոշումներն կը գործադրուին Ս. Պատրիարքի հաւանութեամբն:

ՅՕԴ. 8. — Միաբանք աչտո են իրենց անձնական գրամով իրենց անձին յատուկ անշարժ կալուած գնելու կամ կառուցանելու, միայն թէ այդ կալուածքն եթէ վազրե գետին է, պէտք է պատկանի միմիայն և անպատճառ Երուսաղիմայ վազրեին, իսկ եթէ զուտ (սրբ) Միւր է, Միաբանք պարտին նախապէս Նէքի միւրի ճեօներով և կամ օրինաւոր վազրեով վանքին վազրե ընելով հաստատել ըստ տիրող օրինաց Տէրութեան թէ յետ մահուան՝ Ս. Երուսաղիմայ Աթոռն միակ ժառանգն ու տէրն է այդ կալուածի:

Եթէ Միաբանք ուզեն անշարժ կալուած գնել կամ կառուցանել, կը պարտաւորին կանխաւ գեկուցանել Ս. Աթո-

ռոյն և կատարել վերոյնշանակեալ օրինական գործողութիւններն. հակառակ պարագայի մէջ պարտազանց կը նկատուին, և ըստ այնմ պարտ ու պատշաճը կը տնօրինուի:

ՅՕԴ. 9. — Ո՛ր և է Միաբան կրնայ ամբաստանութեան ենթարկուիլ, բայց ամբաստանողը պարտի գրաւոր ներկայացնել իւր ամբաստանութիւնն առ Ս. Պատրիարքն:

Ս. Պատրիարքին յանձնարարութեամբն ամբաստանութիւնք կը քննուին և կը վճռուին Տնօրէն ժողովոյ մէջ:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — Այդ Գրդ յօդուածին վրայ խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Գանի որ նախընթաց ութն Յօդուածոց վրայ ոչ ոք դիտողութիւն ունեցաւ, նախ ժողովոյը ընդունելութեան պիտի ենթարկեմ զանոնք, յետոյ Գրդ Յօդուածին վրայ խօսք տալու համար:

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի ժողովոյ ընդունելութեան ենթարկեց Երուսաղիմայ Կանոնագրին 1, 2, 3, 4, 5, 6, 7, եւ Ցրդ յօդուածներն: Սակայն մի քանի Երեսփոխանաց ձեռնպահութեան պատճառաւ 24 ձայնից միաբանութիւն չի գոյանալով, որոշումն անհնար եղաւ: Այս վիճակին առջեւ Ատենապետ Էֆէնտի յայտարարեց թէ՛ ըստ որում 24 ձայնից միաբանութիւն չգոյանար, ապարդիւն կը լինի նիստը շարունակել, եւ թէ հետեւաբար յաջորդ նստին կը մնայ թէ՛ առաջին ութն յօդուածոց քուէարկութիւնն եւ թէ յաջորդ յօդուածոց վրայ վիճարանութիւնն:

Ղազարոսեան Բ. Էֆէնտի դիտեց որ մինչ Երեսփոխանաց թիւն հետզհետէ կը նուազի

եւ միւս կողմէ նոր ընտրութեանց համար հրահանգ չի տրուիր, նիստերն այսպէս ապարդիւն կը մնան, ուստի Մայր-Դիւանին ուշադրութիւնն հրաւիրեց այս կէտին վրայ, որպէս զի պակասեալ Երեսփոխանաց ընտրութեան գործը կատարել տայ վարչութեան: Առ այս ձայնակցեցան Իւթիւճեան Կ. Էֆէնտի եւ այլք:


Սըվաճեան Կ. Էֆէնտի ալ դիտելով թէ Ղազարիոյ շէնքին մէջ Ազգ. ժողովոյ յատկացեալ ժողովարարի շինութիւնն գրեթէ աւարտած է, եւ Երեսփոխան տեսարց համար ալ մինչեւ Գում-Գարու գալ շատ դժուար է, առաջարկեց Յանձնաժողով մը կազմել որ պաշտօն ունենայ նորակառոյց սրահին կահաւորման հոգն ստանձնել:

Ատենապետ Էֆէնտի, ի պատասխանի այս դիտողութեանց, հաստատելով հանդերձ թէ պակասեալ Երեսփոխանաց տեղ նոր ընտրութեանց յապաղումն եւ Երեսփոխան Տեսարց մինչեւ Գում-Գարու գալու դժուարութիւնն, մասնակի արդեւքներ են թէպէտ ժողովոյ մեծամասնութիւն ունենալուն, բայց ասոնցմէ աւելի մեծ եւ աչքի զարնող պատճառ

մ'է, ըսաւ, Երեսփոխան Տեսարց իրենց պաշտօնին կատարման համար՝ ընդհանուր առմամբ՝ պէտք եղածէն նուազ փոյթ եւ եռանդ կրելն: Եթէ, յարեց, մեր պատուարժան ընկերներն հաճէին փոքր ինչ նեղութիւն յանձն առնուլ Ազգ. ժողովոյ աշխատութիւններն արդիւնաւորելու համար, իրենց արդի թիւն ալ պիտի բաւէր թէ՛ նախընթաց շրջանին մէջ աւելի նիստեր կազմելու, եւ թէ՛ այսպէս թուոյ անբաւականութեան պատճառաւ զմեզ նիստը դադրեցնել չհարկադրելու:

Նստի փակման պահուն Գուրգէն Յ. Էֆէնտի իմանալ ուզեց թէ ժողովոյ յաջորդ նիստն ե՞րբ տեղի պիտի ունենար, առ որ Ատենապետ Էֆէնտի պատասխանեց թէ յառաջիկայ նիստէն յառաջ Մայր-Դիւանին անդամներն ի խորհրդակցութիւն պիտի հրաւիրէ ինչ ինչ առկախ խնդրոց համար եւ հետեւաբար յայնժամ պիտի կրնայ որոշել ժողովոյ գումարման յարմարաւոր օրն:

Ատենապետ փակեցու ի ժամ 5 1/2:
 Ատենապետի Գում-Գարու
 Մ. Յ. ՄԷԼԻԲԵԱՆ Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՂԵՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ՆՆԵՆՍԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրե.
- 2 Արիստա. Եպս. Դերձկ. Բ Պ
- 3 Գէորգ Վ. Իւթիւճեան
- 4 Սաշատուր Բ. Գարրի. Բ

Բ. Վիճակ

- 5 Խորէն Եպս. Նար-պէյ Բ
- 6 Յովհաննէս Բ. Մկրեան Բ
- 7 Գրիգոր Բ. Աճէմեան Բ Պ
- 8

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Փափաղեան Բ
- 10 Խորէն Բ. Փէհլիվանե. Բ Պ
- 11 Ոսկի Բ. Օհանեան Բ Պ
- 12 Յովհ. Քէ. Շահպաղե. Բ

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ Վ. Այլաղեան
- 14 Յովհ. Վ. Արշարունի Բ
- 15 Սահակ Քէ. Մարգսե. Բ Պ
- 16 Վահան » Գրիգորե.

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վ. Այլաղեան Բ
- 18 Գարեգին Վ. Թաթարե. Բ
- 19 Սուքիաս Բ. Ստեփանե. Բ
- 20 Գարրիէլ Բ. Սանճեան Բ

- Բ Բացակայութիւն առաջին
- 2 » երկրորդ
- Պ » բանաւոր պատճառաւ

ԱՄԵՐԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

Գում-Գարու, Կեօիկ փաշա
Եւ Գում-Գարուի դուրս

- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Յ. Մէրեթի-Գուլի
- 23 Մինաս Չերազ Բ Պ
- 24 Սաշիկ Կամարական Բ
- 25 Միհրան Վարդազարե.
- 26 Մկրտիչ Կիւրճեան Բ Պ
- 27 Երամ Ճենաղեան

28

29

30

31

32

33

34

35

36

37

Բ. Վիճակ

Պէշիկթաշ

- 38 Բարսեղ Հալաճեան
- 39 Յովհ. Քէրէստէճեան Բ
- 40 Մեղքոն Պարոնիկեան Բ

ԵԿԵՐ-ԳԱՐՈՒ

- 42 Մարուգէ Յրէնիկեան
- 43 Պօղոս Էնքսէրճեան
- 43 Յակոբ Պօշնակեան
- 44

Ի. ԱԿԻՒԱՍՐ Ս. ԽԱԶ

- 45 Սիմէօն Յէլէկեան Բ 2
- 46 Գարրիէլ Նորատունկ. Բ 2

- 47 Գասպար Գասպարե.
- 48 Գրիգոր Չիթճեան Բ Պ
- Ի. ԱԿԻՒԱՍՐ Ս. ԿԱՐԱՅԵՈՒ
- 49 Պօղոս Թորգոմեան Բ
- 50 Տրդատ Փափաղեան
- 51 Յակոբ Հաճեան Բ Պ
- 52 Միհրան Սէթեան Բ

Գ. Վիճակ

Գարսի-Քաշա

53

ԲԵՐԱ

- 54 Գրիգոր Սէլիմիյէճե. Բ 2
- 55 Ղազար Հովուեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան Բ
- 58 Վիշէն Օրմանեան
- 59 Սինեքերիմ Մանուկե. Բ 2
- 60 Համբարձում Մազպ. Բ
- 61 Մանուկ Ասլանեան Բ 2
- 62

Միջագիւղ

- 63 Տիգրան Եուսուֆեան Բ 2
- 64 Մկրտիչ Գազանճեան Բ 2
- 65 Ստեփան Տամատե. Բ
- 66 Յար. Նորատունկեան Բ 2
- 67

Պէլգօզ Եւ Ղալաթիա

- 68 Միքայէլ Մամիկանե. Բ 2

Դ. Վիճակ

- Քուզլուճնուզ Եւ Իճատիյե
- 69 Մկրտիչ Մէզպուրեան Բ Պ
- 70 Սիմօն Մազսուտեան Բ 2

Գառըզիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆՐԵՍՓՈՒՄՆԵՔ	Նիկոմիդիա
71 Կարապետ Հազարեան Բ 2	Ա. Վիճակ	120 Կարապետ Ս. Իւթիւճ.
72	2մշկածագ	ԱԿԵ
Նարյը-Գարու:	101	121
73 Միհրան Տէօքմէճեան	Գաղափա	Ղարաճիսար
Եհնի-Մանայիկ Սամարիոյ	102	122 Կարապետ Երէցեան
74	Ատանա	Արաբկիք
Թօք-Գարու:	103	123 Կարապետ Խաչիկե. Բ Պ
75 Յարութիւն Թիրեաքե.	Սդերդ	Բաղէշ
Էյուպ Ս. Եղիս Է. Ս.	104 Մասթէոս Ալէքսանե. Բ	124 Արփիար Արփիարեան
Աստուածածին	Եօզդատ	Գ. Վիճակ
76	105	Թերիբտաղ
Գուրու-Չեղսե	Մայրիա	125 Տիգրան Գ. Սինանե. Բ
77 Կարապետ Սըվաճեան	106 Գէորգ Վարդանեան Բ	Կեօսրիա
Հիսար Է. Պօյաճի-Գիւղ	Իզմիր	126
78	107	Խարբերդ
Նոր-Գիւղ Է. Սրենիա	Եգիպտոս	127 Պայքրեաք
79 Սեպուհ Տէմիրճիպաշե.	108 Արրահամ Մուրատեան Բ	128 Ստեփան Գօլօլեան Բ 2
Պայտո	Բ. Վիճակ	Մուշ
80 Մկրտիչ Կիւմիւշեան Բ	Պրուսա	129 Ստեփան Փափաղեան
81 Ռէթէոս Թաղէոսեան	109 Բրիտանոսուր Ղազարոս.	Տիվրիկ
82 Ներսէս Երէցեան	Եւդոկիա	130 Նշան Գարազաշ
Բարակեօմրիւկ	110	Զեյրուհ Է. Մարաշ
83 Յովհաննէս Թորոսեան	Ամասիա	131
84 Կարապետ Փանոսեան Բ 2	111 Համբարձ. Ալաճաճ.	Տրապիզօն
Ե. Վիճակ	Բաղու:	132 Յովսէփ Շիշմանեան
Սամարիա	112	Ե. Վիճակ
85 Յակոբ Արշակ	Եղեսիա	Պաղտատ
86 Յովհաննէս Նուրեան	113 Յակոբ Իւթիւճեան	133 Կարապետ Սէթեան Բ
87	Մանգրլիս	Տիգրանակերտ
88	114	134 Միհրան Չօպանեան
89	Հանքն	Վան
90	115	135 Մարկոս Աղարէգեց.
91	Երզնկա	Ազրամար
92	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ 2	136
93	Գ. Վիճակ	Հայեպ Է. Այնրապ
94	Կարին	137
Խասգիւղ	117 Սերովբէ Ազնաւորե. Բ Պ	Սեբաստիա
95 Ռուբէն Պուլիուրեան	Քեօթանեա	138 Մկրտիչ Յ. Մէլիքեան
96 Նշան Փափաղեան	118 Աւետիս Թընկերեան	Ռուսնուգ
97	Ազրիանուպօլիս	139
98	119	Բաբերդ
99		140
100		

ԱՆԳՈՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Տ. Մկրտիչ	Արքեպիսկոպոս	Սրբիւնեան	Ա. Ատենապետ
2. » Հմայեակ	Եպիսկոպոս	Գրմաքսեան	Բ. »
3. » Գէորգ	Վարդ. սպետ	Ռուսնուգլեան	
4. » Ներսէս	»	Ասլանեան	
5. » Գէորգ	»	Իւթիւճեան	Ա. Ատենապետ
6. » Իգնատիոս	»	Շիշմեան	Բ. »
7. » Մաղաքիա	»	Տէրունեան	
8. » Յովսէփ	»	Սարաճեան	
9. » Յովհաննէս	Քահանայ	Հիւնքեարպէ յէնտեան	
10. » Խաչատուր	»	Տ. Գաբրիէլեան	
11. » Արիստակէս	»	Մամբրէեան	
12. » Յովհաննէս	»	Շահպաղեան	
13. » Գրիգոր	»	Արամեան	
14. » Միքայէլ	»	Պալատու	

ԱՆԳՈՄՔ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1. Յովհաննէս	Էփէնտի	Նուրեան	Ա. Ատենապետ
2. Գաբրիէլ	»	Նորատունկեան	Բ. »
3. Համազասպ	»	Պալլարեան	Ա. Ատենապետ
4. Յովհաննէս	»	Պօյաճեան	Բ. »
5. Աբիկ	»	Ռենճեան	
6. Ալէքսան	»	Սաքսեան	
7. Խաչիկ	»	Կամարական	
8. Կոստանդ	»	Կոստանդեան	
9. Միհրան	»	Սէթեան	
10. Յակոբ	»	Յրէնկեան	
11. Սերովբէ	»	Կիւլպէնկեան	
12. Սինեքերիմ	»	Մանուկեան	Վախճանեալ
13. Տիգրան	»	Բարազամեան	
14. Տիգրան	»	Կիւմիւշկէրտանեան	

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Խնդիր Ատենագրութեանց վաւերացման (Նիստք ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. և ԻԶ. 1883 ամի բացման և նիստք Ը. Թ. 1886 ամի բացման) :
2. — Բացակայութիւնք :

Մ Ի Զ Ա Դ Է Գ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Կազմութիւն Նախաքննիչ Դիւանաց :
- Բ. — Վերաքննեալ Կանոնադիր Սրբոց Յակօբեանց Միաբանութեան .
(Տեղեկագիր Ազգ. Վարչութեան. Շար. վիճարանութեան) :